Անոնք 1811 հունիսին սկիզբ առին Բուխարեստի մեջ մեկ կողմն Համիդ էֆենդիի և մյուս կողմն Պոլստ ռուս ղեսպան Իտալինսկիի միջև<sup>39</sup>, առանց սակայն անմիջական արդշունք մը տալու:

Այնպես որ 1811 օգոստոս 17-ին ռուսեթուրք բանակցութեանները դեռ որեւէ պտուղ տված չէին<sup>40</sup>:

38 Նուրմուգաֆի, Դոկումենտներ, հատոր 19, մաս 2, էջ 719:

39 Նուրմուգաֆի, Դոկումենտներ, հատոր Բ, հավելված Ա, էջ 614:

40 Անդ, էջ 620:





Կուտուղով կհայտնեն թե այդ մասին պիտի հաղորդեն ցտորին, հայտարարելով սակայն մեծ վեղիբրին թե պիտի չհամարձակի նման առաջարկ մը ներկայացնել իր վեհապետին բայց միայն այն պարագային, եթե Այսրդիայի թուրք բանակը անձնատուր ըլլաւ:

1811 զեկտեմբեր 7-ին մեծ վեղիբը կհամակերպի նվաստացուցիչ աչառաջարկին ալ: Այսրդիայի թուրք զինվորները, որոնք 36 հազարին 12 հազարի իջած էին՝ կհանձնեն իրենց թնդանոթներն ու զենքները:

Դեկտեմբեր 11-ին թուրք լիպոբորները կժամանեն Բուխարեստ:

### 3.

#### Մանուկ բէյ իրեն միջնորդ բանակցություններուն

Ահա կրկին ասպարեկի վրա է Մանուկ բէյ:

Ինչպէս հայտնի է՝ Բուխարեստի հաշտութեան բանակցութեանց մեջ ռուս պատվիրակութեան անդամներն էին Անդրե Խալիսկի, Պլոսո ռուսական ղեկավար, զորավար Ժան Սարանիւ, և Պլոսո ռուս ղեկավարատան զխալիք ղեկավար Ժոզեֆ Ֆոնդոն, իսկ թուրքի պատվիրակներն էին Սեյիդ Մեհմեդ Գալիբ, Սրվան Ռեիս էֆենդին, Ասիական կողմի կապառներ Մուֆրի զադե Բերահիմ Սելիմ էֆենդին, և ենիչերիներու զխալիքներն Աբդուլ Համիդ էֆենդին, զխալիք խորհրդական ունենալով Գիմիտրաքի Մորուզին, ավագ զբաղմամբ Բ. Գրան, որ ծագումով հույն էր:

Այդ, ոչինչ ավելի ձեռնտու էր ռուսերուն համար, քան մտերիմ կապերը զորս Մանուկ բէյ ուներ Բուխարեստ ժամանող հաշտութեան թուրք պատվիրակութեան հետ:

Հիրավի՝ Սեյիդ Մեհմեդ Գալիբ բէյ, որ Յաշի ձախողած բանակցութեանց ընթացքին թուրք պատվիրակն էր եղեր և որ թուրք պատվիրակութեան պետը կամար սույն րանակցութեանց ընթացքին ևս՝ մեկն էր Մանուկ բէյի ամենամոտիկ թուրք բարեկամներէն:

Ան իրեն հետ մեկտեղ մաս էր կազմեր Ռուսչուկի մեջ Բայրաքթար Մուստաֆա փաշայի շուրջ հավաքված խմբակին և մասնակցեր էր Բայրաքթարի կառավարութեան ալ: Ենիչերիները Բայրաքթարի բոլոր գործակիցները իրենց պատվարութեան ալ: Սուլթանը զայն պահէր էր Ռեիս էֆենդիի պաշտոնին վրա, և ալի անգամանքով ալ ան կու գար հիմա հաշտութեան թուրք պատվիրակութեանը զխալիքներու:

Մանուկ բէյի և Գալիբ բէյի մտերմական կապերը այնպիսին էին, որ թուրքի Ռեիս էֆենդին չէր բաշխեր նույնիսկ զբանական օգնութեանը դիմելու իր հայ բարեկամէն: Մանուկ բէյի արխիվին մեջ պահված են 1809 մարտի 12 և 13 թվակիր անոր զույգ նամակները որոնցով զանազան զումարներ փոխ ուղած է ան՝ ռուսերու հետ բանակցութեան համար Յաշ հասնելուն առթիւ<sup>42</sup>:

Գալիբ բէյ նման փոխառութիւններու համար Մանուկ բէյի դիմած է

42 Բուխարեստ քաղաքի պատմութեան թանգարանի արխիվ, № 26230 և 26233:





մտերիմ նամակին մեջ թե Ռուսիո կայսրը հրամայած էր Կուսուղովին թուրք պատվիրակության հետ անհրաժեշտ շփումները ունենալ իր՝ Մանուկ բեյի միջոցով. «նայ ևրս հրամայեալ էր թե նայ իմոյ միշնորթութեամբ խոսեցի պատասխանելն (թուրքաց) մեծ ղեսպանին, բլլա ալս բանըս արշինինըն խիստ գաղտուկ էր, միայն թուրքիոյ մեծ թեսպանն և Գուխուղովն և ծառայթ, և այլ ֆոնթոներն զի Հայ էր ի մէջ բրինձ Գուսուղովի և իմոյ թարգման, այլ ուրիշ մեկ մարթ չի գիտեր ոչ թուրքիոյ մէկայլ երկու թեսպանին և ոչ նոցա: Թարգման Մարուղըն և ոչ բուստոց (ղեսպանն), ոչ (ի) թալինցրին»<sup>45</sup>:

Բուխարեստի հաշտութեան բանակցութեանց և Մանուկ բեյի կատարած ղերին մասին բարեբախտաբար թանկագին վկայութիւններ կ'մնան ըլլա ռուսական արխիվներու վաղեմութիւններուն, բլլա օտար հուպատոսներու տն-ղեկագիրներուն մեջ, առանց հիշելու փաստանյութերը, որ Բուխարեստի պատմութեան թանգարանի իր սեփական արխիվին մեջ կ'պահպանէ թուրք միաշայն ևն վկայելու բացառիկ այն ղերին մասին՝ զոր Մանուկ բեյ խաղաց ռուս և թուրք սուլն բանակցութեանց ընթացքին, ղեր որ ղերախտաբար մոտոցութեան տրված է պատմական հետազոտութեանց մեջ:

Հյուպատոսական այն տեղեկագիրներուն մեջ զորս Բուխարեստի և Յալի օտար հուպատոսները ղրկած են իրենց կառավարութեանց՝ ղանտն տեղ-յակ պահելու համար ռուսին երկիրներու մեջ տեղի ունեցող անցողաբաններուն, բացառիկ շահեկանութիւն կ'ներկայացնեն Բուխարեստի ավստրիական հյուպատոս Ֆելչարելի հղած տեղեկագիրներ Մետերնիխին, ըթե ֆրանսական հյուպատոսները տարված էին առավելապէս պատերազմը երկարածոված տեսնելու մտահոգութեամբ, Ավստրիո գործակալները նույնքան մոտեն կ'են-տեմին Բուխարեստի անցքերուն, մզված տարբեր շահագրգռութենէ: Այդ նպատակով ալ անոնք ավելի մոտեն շփում ունեն թուրք պատվիրակության շրջանակներուն հետ, և մասնավորապէս պատվիրակության ավագ խորհրդական իշխան Մորուզիի՝ որուն հետ մտերիմ խոսակցութիւններ ալ կու-նենային: Ֆելչարելի իր 1812 ապրիլ 9 տեղեկագրով Մետերնիխին կ'հաղորդե, յօրինակ անոր հետ իր մեկ գաղտնի տեսակցութիւնը ուր խոսքի նյութ եղած է Ռուսիոյ մոտաքր ավստրիական բանակի մը, ինչ որ պիտի ստիպեր ռուսն-րը Վալահիան պարպել և հնարավորութիւն տալ թուրքերուն Գանուրը անցնելու<sup>46</sup>:

Դեպքերը այլապէս պիտի զարգանային, և այս ու նման ծրագիրներ պիտի ծառայէին պատմական արձանագրութեանց էջերը զարգարելու համար միայն:

## 10.

### Ռուպեսգի կնճիկ Բուխարեստի ղաջնագիրը

Ռուս և թուրք շփումները պիտի աշխուժանային 1812 տարվան հետ: Մեկ կողմէն նկատելի կ'դառնար որոշ աճապարանք մը երկուստեք, որով-հետեւ երկու կողմէն ալ կարիք ունենին օր առաջ վերջացած տեսնելու թը-

<sup>45</sup> ԼիՊՊԱ, ֆոնդ 880, ց. 5, գործ 7, թղ. 214:

<sup>46</sup> Հուլիսագրի. Գեղումներ, 20-րդ, 1, թ. 12—13:



Նամոթյունները: Սյուս կողմն հռչային զիջումներու խնդիրը կղծվարացներ հասկացողոթյուն մը կողմնրուն միջև, ինչպես զղծվարացուցեր էր նախապես կատարյալ ըլլոր հարցերուն առնն, նունիսկ Բայրարթարի օրերնն սկսած:

Կալիր էֆենդի, թուրք պատվիրակության պետը, 1812 հունվար 4-ի,  
 ռուս լիազորներուն կնեկակայացներ թրքական վերջնագիրը, որ սուրհանդակի  
 մը միջոցով կղրվեր իսկույն Պետերբուրգ:

Այս կապույթյան մեջ կղժվարանաւո ռոզղակի շփում մը երկու պատուի-  
րակութիւննց միջեւ:

Մասնակ բեյին կթելագորվի, օրինակ, ջանալ համոզել Գալիբ բեյը այն վտանգներուն մասին, որոնք թուրքիոյ կապառնան դուրսէն, և մատնանշել սնոր շահագրգռող պետութեանց փորձերը, որոնք կջանան թրծարծել առանձին-ինքն ինքն ուրբան շահավոր պիտի ըլլա թուրքիոյ համար բարի դրացիութեան կին թն որբան շահավոր պիտի ըլլա թուրքիոյ համար բարի դրացիութեան կապեր հաստատուել հայկական իր զաւակին հետ, ոչ միայն արագ վերջ տալով ներքին պատերազմին, այլ և փոխադարձ օգիւթեան դաշինք մը կնքելով, այսինքն տեսակ մը զինակցութիւն՝ որուն կփափաքին նաև առանքը<sup>8</sup>:

\* Ըստ հետադարձ համանորար պետք է լինի միայն (առաքելություն): Մանոթ. խմբ.:





1928-ին հաշտության զաշնագիրը կնքվեցավ վերջնապես, և հունիսի մեջ էր միայն որ ան կրածնվեր ուսման հոգերեն:

Բուխարեստի զաշնագիրը 1812 հունիս 23-ին կվավերացվեր Վերնայի մեջ, և հաջորդ օրը նապոլեոն կձեռնարկեր իր մեծ զորհին ընդդեմ Ռուսիո:

Մանուկ բեյ կրնար հպարտ ըլլալ արագացուցած ըլլալուն համար ուսուխիւրը հաշտության սուլն զաշնագրին կնքումը, և այս՝ ի մեծ արժամատւթուն նապոլեոնի և իր մեծ ու փոքր զործակալներուն, որոնք իրենց բոլոր միջոցներով աշխատել էին երկարաձգելու թշնամութիւնները, ուստի զորքերը զրադած պահելու համար Դանուբիան սուլն չբռնին մեջ ուստի պետութիւնը զեմ նապոլեոնի ծրագրած մեծ արշավանքին ատեն:

Մանուկ բեյ զեռ շորս տարի ափելի առաջ կուզեր իրականացնել հասկացողութիւն մը երկու պատերազմիկ կողմերուն միջև, եթէ պարագաները թույլ տված ըլլային իրեն:

Այն վկայականին մեջ զոր իշխան Պրոքորովսկի իր մենտեղն առաջ հրահանգած էր հանձնել Մանուկ բեյի՝ Բուխարեստի ուստի հուպատոս Լուրս Բիրբոր, 1809 սեպտեմբեր 15-ին, հիշատակելու առթիվ Մանուկ բեյի մատուցած ալլադան ծառայութիւնները ուստի զենքերու հաջողութեան համար, կվկայել ի միջի ալլոց թէ Մանուկ բեյ «գիտցած է հանգուցլալ Բալուարթար Մուստաֆա փաշան բարչացական տրամադրութեան մեջ պահել զեպի Ռուսաստանը, տրամադրութիւն, որ պետի առաջնորդել ելուտ կողմին համալալ զհաջողութիւ հաշտութեան մը եթէ մահ, Պրոքտ վերջին բմբոստութեան բնթացքին, խլած չըլլար այն խաղաղասեր մեծ վեզիրը»<sup>52</sup>:

Եթէ հասկացողութեան փորձերը վիժեցան այն ատեն, Մանուկ բեյի կամբքն բոլորովին անկախ պայմաններու երեսն, շորս տարի հետո անոնք կիրականանային՝ ի հեճուկս նապոլեոնի և իր զործակալներուն բոլոր հուսանքուն և սաղարներներուն, իսկ սուլն հաջողութեան մեջ Մանուկ բեյ իր վճռական գերն ունեք դարձլալ:

Մտերմական այն համակին մեջ զոր Մանուկ բեյ հաշտութեան կնքումն ափելի բան տարի մը հետո այն է 1813 օգոստոս 6-ին Սփրիտեն պիտի զրկեր Պետերբուրգ իշխան Հովակիմ Լաղարյանին, կթվէ խոշընդոտները, որոնց պետը եղավ զիմադրավել հաշտութիւնը ապահովելու համար պատերազմիկ կողմերուն միջև, Ռուսաստանի այնքան նպաստողոր պայմաններու մեջ, կողմերուն միջև, Ռուսաստանի այնքան նպաստողոր նախդիւնի որ այնպէս և ալ՝ հակառակ սաղարներներուն «չարայայախտ նախդիւնի որ այնպէս և ալ՝ հակառակ սաղարներներուն...»<sup>53</sup>:

## 11.

### Ստատեկու համար իր ձեռնդավալբին

Բուխարեստի զաշնագիրը նոր հանգրվան մը կրնար Մանուկ բեյի կյանքին մեջ:

Անոր հետագա գործունեութիւնը ամբողջապես կկապեր ուստի շահերու հետ:

<sup>52</sup> ԼԿՊԱ, ֆոնդ 330, ց. 5, դոք 7, թղ. 191—195:

<sup>53</sup> Անդ, թղ. 212:

եւ սակայն բոլորովին ալ չէր խզած ան իր կապերը թուրքերուն հետ, մասնաւանդ անոնց՝ որոնց հետ անցեր էր իր ամբողջ կյանքը Դանուբի ափերուն վրա և որոնք, փոխադարձաբար, զեռ իրեն կապված կղզային իրենք զիրենք:

Հաշտութեան կնքումը առիթ մը եղավ Մանուկ բեյի՝ իր վեհաձեռնութեան նոր մէկ ապացույցը տալ թուրքերուն, այս անգամ այն գերիներուն, որոնք պիտի վերադարձոյն Ռուսիայէն և որոնց մեջ ինք ևս բարեկամներ կհաշվելու վերադարձողներուն մեջ էին հայտնի Փեհլիւան փաշան, Իսխիլալը Ահմեդ փաշան, Արաբ փաշան, Չափան օղլու Մեհմեդ փաշան, Մորալը Ալի փաշան, և զեռ ուրիշ բազմաթիւ կարկառուն գեմեր՝ որոնցմէ ոմանք ծառայեալ էին Բալթիկ ծովի օրով: Անոնցմէ շատերուն Մանուկ բեյ օգներ էր իրենց գերութեան շրջանին. հիմա, երբ անոնք Բուխարեստ կհասնեին իրենց գերութեան՝ Թուրքիա դառնալու համար, իր հոգածութեան առարկա դարձած բոլորն ալ, ամեն կերպով օգնելով անոնց, Քյոսե-Քեհյա Ահմեդ էֆենդի Նիկոլաեկա մնալոր էր՝ վստահութեամբ շտապելով Թուրքիո նոր փշխանութեան վրա, իսկ Ռամիլ փաշա առայժմ կսպասեր Յաշմ:

Երբ Կոստուզով 1811 հուլիս 12-ին կպարպեր Ռուսչուկը հրո ճարակ ընելու հետո գայն, Բոշնակ Աբդուլլահ որ ինք ամիս առաջ, 1810 հոկտեմբեր 5-ին, գայն հանձներ էր ռուսերուն՝ առանց կոիւ մղելու, ինչպէս թելադրեր էր իրեն Մանուկ բեյ, կդառնար կրկին Ռուսչուկ վերստանձնելու համար քաղաքին այանութունը, դայն գտաւ հետին ծայր թշուառութեան մեջ, ու ամեն կարգ ու կանոն շրջված այնտեղ հիմնի վայր: Իր առաջին մտածումն եղավ Ռուսչուկ հրաւիրել Մանուկ բեյը՝ վստահ որ ան միայն կրնա դարման անիլ այս տաժանելի դրութեան: Այս նպատակով ալ բանիցս նամակներ գրեց անոր Մանուկ բեյ ի սկզբան վստահութեան շտապելու, և Ռուսչուկ զրկեց Պապիկը զոր շատ սիրով կերպով ընդունեց Բոշնակ: Պապիկ հաժապեց վերադարձին թէ եղած հրովերը քաղաքին բարիքին համար է միայն: Այնուամենայնիւ, պարագաներու բերմամբ Մանուկ բեյ չկրցաւ շուտով մեկնել: Երբ սակայն 1812 հոկտ. 2-ին ծովակալ Չիշակով ռուս զորքերը բաշեց Բուխարեստէն, Մանուկ բեյ որոշեց սպասախանել Բոշնակի հրավերին, և հոկտեմբեր 18-ին մեկնեցաւ թուրք սլաւոփրակութեան պետին՝ Գալի բեյի հետ, որուն ևս գրած էր Բոշնակ Մանուկ բեյը համոզելու Գալի 5 օր միայն մնաց Ռուսչուկ և մեկնեցաւ Շումլա մեծ վեղերին մօտ, իսկ Մանուկ բեյ զեռ ատեն մը մնաց հոն և իր խորհուրդներով սատարեց բարեկարգելու քաղաքը ուր ինք ծնեւ և հրկար ատեն ապրեւ էր: Իր թելադրութեամբ էր, որ, օրինակ, Բոշնակ զեղչեց շրջակա գյուղերուն վրա գրված տուրքերը, որոնք կհնչեին բնակչութեանը:

## 12.

### Բ. Դրան մոլեգնութունը

Նիւ ճիշտ այդ օրերուն նոր մոլեգնութուն մը կհամակեր Բ. Դուռը: Ան կսկսեր միջոցներու ձեռնարկել պատահասելու համար անոնք, որոնք պատրաստեւ և նվիրագործեր էին իր նվաստացումը Բուխարեստի մէջ:

54 Մսեթյան, էջ 221—222:

55 Մսեթյան, էջ 222—225:



Այդ մոլեկանությունը ան սկսել էր ցույց տալ, Բայրաթթարի եղբրական վախճանին հետո, բոլոր անոնց գեմ, որոնք գործակցել էին անոր՝ ըլլա ենիշերիննրու տիրապետությունը ջախջախելու համար անոր ձեռք առած միջոցներուն ատեն, ըլլա անոր փորձերուն առթիվ ռուսերուն հետ հասկացողության մը գալու համար:

Ասոնցմա ոմանք պատուհասվել էին 1808 նոյեմբերի դեպքերուն վաղորդային իսկ, ուրիշներ ենիշերիննրու վրեժխնդրութենէն հողոպրած՝ հաջողքի էին ռուսերուն ապաստանել, ինչպես նախկին կապուտան փաշա Մամիկ, Ռուսչուկի այլան Քյոսե-Քեհչա Ահմեդ էֆենդին, Թրնովայի այլան Մեհմեդ Մամիշ աղան և ուրիշներ, ու կապրեխ տարազրության մեջ:

Հալածանքն պիտի չաղատելին նաև անոնք որ զեր կատարել էին Բուխարեստի հաշտության կնքման մեջ: Արդարև դեռ չորցած էր դաշնագրին տակ զրկած սատրապրությանց միւսներ, երբ Բ. Դուռը հետապնդել սկսավ բոլոր անոնք, որոնք աջակցել էին Թուրքիոյ համար այնքան անկաստողաշնայողին մը կնքման, սկսելով նույն իսկ անոնցմա որոնք Ռուսիո հետ մտրձեցման հր կուտակից էին դեռ Բայրաթթարի օրով: Ընչու է՝ ան պիտի խնայել թուրք պատվիրակության պետին, Գալիբ բեյի, որ Սուլթանին մասնավոր համապարկություն կվազելներ և հետագային մինչև սատրապամություն պիտի բարձրանար. բայց բոլոր մյուսները հալածանքի նշավակ պիտի ըլլային մեյ մեկ կերպ:

Իր շղթայաղերծած այս հալածանքին մեջ Բ. Դուռը կուր գործիքնեռ ունեցավ իրեն: Ասոնցմա էին Բուխարեստի և Յաշի համար իր անվանած նոր իշխանները, մանավանդ առաջինը անոնցմա որ Յանուր Կարաջա Վոդան էր և որ կուրար կատարալ պատուհաս մը դառնալու վախճիտ բնակչության համար:

Ինչպես տեսանք՝ Մանուկ բեյ բալական երկար մնացել էր Ռուսչուկ, ուր գնացել էր Բոշնակ աղայի հրավերով: Այնտեղ էր դեռ երբ 1812 նոյեմբերին Շումլա, մեծ վեպիին հանդիպելով, Բուխարեստ իր պաշտոնատեղին բերմար վախճիտ նոր իշխանը, Յանուր Կարաջա, որ Թուրքաքանէն անցնելուն փափաքեցավ Մանուկ բեյը իշխանը, Յանուր հանգիստուն՝ հազար հալուն փափաքեցավ Մանուկ բեյը իշխանը, իսկ Կարաջա ուղղակի թյանը շնորհիվ Մանուկ բեյ վերադարձել էր Ռուսչուկ, իսկ Կարաջա ուղղակի դացել էր իր աթոռը գրավել:

Մանուկ բեյ դեռ Ռուսչուկ էր նույնպես երբ լուր առավ թև Շումլայի մեջ իր զխատված է Դիմիտրակն Մորուզին՝ ռուսնթուրք դաշնագրի կնքման մեջ իր ունեցած դերին համար: Լուրը իրեն հաղորդված էր Պապիկին կողմն, որ իր կարգին դայն իմացած էր իշխան Կարաջային: Կարաջա Պապիկին խնդրած էր լուրը տեղեկացնել նաև Մանուկ բեյին և անոր թելադրել որպեսզի զգուշանա Գալիբ բեյին և թրթրակցի անոր հետ, ան ևս, ըստ Կարաջայի տեղեկութային, Բ. Դուրան կողմն դատապարտված ըլլալով մահվան, իբրև պետը ռուսերու հետ նվաստացուցիչ այդ հաշտությունը կնքող թուրք պատվիրակության:

Եվ ահա, դեռ Ռուսչուկէն Բուխարեստ չմեկնած, Մանուկ բեյ նամակ կատանար նույն ինքն Գալիբ բեյին, որ իր կարգին զինք կզգուշացնել Կարաջա իշխանէն, հայտնելով որ ան համախորհուրդ շարաշուք Հալեթ էֆենդիի ջա իշխանէն, հայտնելով որ

# ԷԶԵՐ ՄԱՆՈՒԿ ԲԵՅԻ ԿՅԱՆՔԵՆ\*

Հ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ

Բ

ԿՈՒՑՈՒԶՈՎԻՆ ԱԶԱԿՑԵԼՈՎ

№ 13

ՄԱՆՈՒԿ ԲԵՅ ԹՈՒՐՔԵՐԵՆ ԿՓԱԽԶԻ ԸՆԴՄԻՇՏ

Հերթը իրեն չհասած՝ Մանուկ բեյ խոհեմությունն ունեցավ խույս տալու երկրեն, Արդեն 1813 հունվար 18-ին Ալեքսանդրու Հանջեբլի, Մուղղավայի նախկին իշխանը՝ որ ատենին բարիքներն էր տեսած Մանուկ բեյին, կտեղեկացներ այս վերջինին, թե Կարաջա առիթի կապակի ծուղակը ձգելու համար գինքն ալ, նման նախազգուշացումներ Մանուկ բեյ ստացած էր նաև Պոլսո իր բարեկամներեն<sup>1</sup>, Կարաջա, որ պահ մը բարեկամական կեղծ արտահայտություններով հանդիպումներ ունեցիր էր Մանուկ բեյի հետ, նույնիսկ իշխանական աթոռը գալ նստելի հետո, 1813 մարտ 28-ին հրովարտակով մը շնչված կհայտարարեր հանկարծ Մանուկ բեյի տիտղոսներն ու վայելած պաանձնաշնորհումները երկրին մեջ<sup>2</sup>։

Ազդանշանն էր աս հալածանքի մը, որ պիտի շուշանար՝ եթե ատենին շարքենար Մանուկ բեյ, Արդարև, քանի մը օր ետք, ապրիլ 1-ին, զիշերանց խույս կու տար ան երկրեն, և կերթար ապաստանիլ Սիրիու։

Մանուկ բեյի վերջին բաժանումը պիտի ըլլար աս ռումեն հողին, ինչպես և թուրք երկիրներեն, ուր այնքան ինչքեր կձգեր, նույնպես և այնքան կապեր, Այն ջերմ համակրության հետ զոր ան կթողուր Դանուբի և Դըմբովիկայի ափերուն վրա, և առավելապես Թուսզուկի և Բուխարեստի մեջ, կույին ցայի ափերուն վրա, և առաջին հերթին վալահիո և Մուղղավայի նոր իշխանշուտ հրճվողներ ալ, և առաջին հերթին Սկարլատ Կալիմաքի, որոնք երբեմն այնքան խառններ Զանգու Կարաջա և Սկարլատ Կալիմաքի, որոնք երբեմն այնքան Լարախիք տեսած, հիմա, Բ. Դրան ձեռքը կույր գործիք դարձած, պաշտոն ասելին զինք հալածելու։

\* Վերջ, Սկիզբը տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվներին» № 3, 1969 թ. և № 2, 1970 թ.։

1 ԲՅՊԹԱ, № 35091։

2 Նույն տեղը։



Առաջին հրահանգներին պիտի ըլլային նաև ֆրանսական զործակալները՝ որոնք տապալած կտեսներին հանձին Մանուկ բեյի ուխտյալ ոսոխ մը նապոլեոնի շահերուն:

Բուխարեստի ֆրանսական հյուպատոսը, լըդու, 1813 հունիս 9-ին կտեղեկագրեմ Մալիկին, թէ իր նախորդ ղեկուցող չաղորդած էր Մանուկ բեյի փախուստին և անոր ինչքերուն վրա զրկած սկիւրեստրին մասին: Այժմ կազմեցնեմ, թէ հրահանգ եկած է Բ. Դոնէն Վալահիո իշխանին՝ չվերցնել արգելքը և կարեւորութիւն չտալ ուս հյուպատոսին բողոքներուն և թէ կիսովի նոյնիսկ, որ Բ. Դոնը Պոլսու ուս պատվիրակին պահանջած է այդ Մանուկը. զոր դատաւիր կնկատեմ և որ իբր թէ մեծ գումարեկ ունի վերագարձնելիք<sup>3</sup>:

Եվ, այնուամենայնիվ, թուրքերը չուղեցին թողուլ Մանուկ բեյի օձիքը, ոչ միայն անոր համար, որ Դանուբի ափերուն վրա զեռ կարիք ունեին անոր ծառայութիւններուն երկրին տնտեսական կյանքին մէջ, այլ որովհետեւ իրենց համար աղետ մը պիտի ըլլար, եթէ ան վերջնականապէս հանձնվեր ուսական շահերուն, պատերազմէն հետո ալ:

Մանուկ բեյի արխիվին մէջ բազմաթիւ նամակներ կան Պոլսէն ղրկված իրեն թուրք պաշտոնատարներու կողմէ՝ որոնք անընդհատ Պոլսի կհրավիրեն զինք, ըսելով, որ Բ. Դրան շրջանակներուն մէջ համակրութիւն և բարյացակամութիւն կտիրեն ղեպի իր անձը և պատճառ մը չկա, որ ան չզոռնա իր հայրենիքը: Առաջին հրավերը ան կատանար հաղիվ Սիրիու հաստատված, այսինքն 1813 մայիս 22-ին, Քեչյա-զաղե Ահմեդ Ամիշ աղայի կողմէ, որ իր մտերիմն էր եղեր Բայրաքթարի օրերէն, և որ հաջողքեր էր իր զիրքերը պահել նոր իշխանութեանց օրով ալ<sup>4</sup>:

Մանուկ բեյ ոչ միայն լուրջի շառավ այդ հրավերները և իր զիրքը որեւէ կերպով չփոխեց, այլ Սիրիոյն Քիշնէ ղրկված նամակներով խորհուրդ տվավ Ահմեդ էֆենդիին ալ՝ չխաբվի անուշ խոսքերէն Բ. Դրան զործակալներուն, որոնք կու գային թուրքիա հրավիրելու զինքն ալ<sup>5</sup>:

Բայց միևնույն ատեն անպատասխանի ալ լծողուց իրեն ուղղված սիրարալ այդ հրավերները, և 1813 հունիս 23-ին գրեց Ահմեդ Ամիշ աղային այն շարժառիթներուն մասին, որոնք պժգացուցեր էին զինք, և այն անշնչելի մթնոլորտին մասին՝ որ զեռ կշարունակեր տիրել օսմանյան մայրաքաղաքին մէջ<sup>6</sup>:

Հրավերները կանգ չառին սակայն: Մանուկ բեյ փաղաքշական զիրք ստացավ 1813 օգոստոս 11-ին և 14-ին ալ<sup>7</sup>, որոնք այլևս անպատասխան մնացին:

Եվ սակայն միշտ թուրքեր եղան, որոնք հետագային ալ կարիք ունեցան Մանուկ բեյին, ինչպէս կարիք ունեցեր էին պատերազմի շրջանին՝ ուսներուն մոտ զանազան միջամտութեանց համար:

Այսպէս՝ 1815 հուլիսի 25-ին, երբ արդեն Մանուկ բեյ վաղուց հեռացած էր թուրք հողէն, Սուլեյման Սըրրի, որ վերահսկող անվանված էր Սիլիստրայի

3 Հուլիսի 16, Դոկումենտներ, հատոր 16, էջ 9:

4 Բուխարեստ քաղաքի պատմութեան թանգարանի արխիվ. № 26407, 26528, 35062»

5 Անդ, № 35059:

6 Անդ, № 35166 և 35167:

7 Անդ, № 35168, 35160:

բերդերուն նորոգութիւն, Մանուկ բնյի Բուխարեստի ներկայացուցիչ Ասա-  
տուր Ավետչանէն աջակցութիւն կ'ենդրեր Բուխարեստի մեջ կատարվելիք  
դնումներու առթիւ<sup>8</sup>:

Մյուս կողմն, բացի այն թուրքերէն, որոնք ապաստանած էին ուսերուն  
մօտ և որոնք իրենց տարագրութիւն շրջանին հանախ կարիք ունեցան Մա-  
նուկ բնյին, անոր հետ բարեկամական կապեր պահեցին նաև իր նախկին  
բարեկամներն ալ՝ որոնք մնացել էին Թուրքիա:

Յերբովչայի ալան Յուսուֆ աղա 1816 մարտ 9-ին կիմացներ Բրաշով  
Մանուկ բնյին, ին 33 քիւլ ծխախոտ ղրկած է իրեն իբր նվեր, ինև ան այդ  
պահուն Պետերբուրգ մեկնած էր արդեն<sup>9</sup>:

Դեռ խոսքը շնկեր ընկեր այն թուրքերուն, որոնք Ռուսիա ապաստանած  
էին կամ գերի տարված էին և որոնք անընդհատ կարիք ունեցան Մանուկ բնյի  
դրամական օգնութիւն՝ ըլլա անոր ռումեն հողի վրա գտնված օրերուն, ըլլա  
թուրք երկիրներէն մեկնելու հետո: Բուխարեստի թանգարանին մեջ բազմա-  
թիվ են անոնցմէ ստացված գիրերը նշումական օգնութիւն համար<sup>10</sup>:

Պետք է ավելցնել, որ շատ ճիշդ անհրաժեշտ եղան Մանուկ բնյի՝ որ-  
պեսզի կարենա իր մօտ, Տրանսիլվանիա բերել Բուխարեստի մեջ իբր պա-  
տանդ պահված իր ընտանիքը, ինչպես և գրավումն փրկելու համար թուրք  
գերիշխանութիւն տակ մնացած շրջաններու մեջ գտնվող իր ինչքերը:

Յիշելու է, Բուխարեստի ավտորիական հյուպատոսը, 1813 մայիս 12-ին  
կտեղեկացնէ Վիեննա՝ վարչապետ Մետերնիխին՝ ի մասին Մանուկ բնյի  
կալվածներուն կնքման և անոր ընտանիքին մեկնելուն դեմ դրված արգելքին,  
ինչպես նաև այն դիմումներուն մասին, զորս այդ առթիւ կրէր Պոլսո ռու-  
սական դեսպանը<sup>11</sup>:

1813 հուլիս 2-ին Ռուսիո վարչապետ կոմս Ռումյանցե պաշտոն կուտա  
Պոլսո դեսպան Իտալիենկիի միջամտել Բ. Դրան մօտ որպեսզի ռուս հպա-  
տակէ Մանուկ բնյ տիրանա թուրք հողի վրա գտնված իր կալվածներուն<sup>12</sup>:

Մյուս կողմն Մանուկ բնյ ինքն իսկ 1814 փետրվար 2-ին Սիբիրոն կգրէ  
Պոլիս՝ ներքին գործերու նախարար Գալիք բնյի, որպեսզի հրահանգէ Բու-  
խարեստ՝ վերցնել Յանքու Կարաշա Վոդայի կողմն իր բնակարանին վրա  
դրված կնիքը և թույլ տալ իր ընտանիքին գալ իր մօտ<sup>13</sup>:

Բայց հազիվ 1814 մայիսին է, որ Մանուկ բնյի ընտանիքին թույլ կտրվի  
անցնել Տրանսիլվանիա<sup>14</sup>:

Նոր էջ մը կրացվի այնուհետև Մանուկ բնյի կյանքին մեջ, էջ, որ հազիվ  
4 տարի պիտի տևեր թուրք հողէն հեռանալն ետք և որ սակայն նույնպես լե-  
ցուն է շահեկան դրվագներով, այս անգամ արդեն ռուս պետութիւն շահերու  
ջրէն անկախ մեջ, սկսելով իր շփումներէն Վիեննայի մեջ Ալեքսանդր Ա. ցա-  
րը անկախ մեջ, սկսելով իր շփումներէն ռուս հողի վրա գալ հաստատվելու,  
րին հետ և անկե ստացած հրավերներն ռուս հողի վրա գալ հաստատվելու,  
մինչև իր ստեղծած տնտեսութիւնը շնչելու մեջ և իր մեծ ծրագիրը իր ծախ-

8 Անդ, № 35104:

9 Անդ, № 35143:

10 Անդ, № 26373, 26400, 26441, 26472, 26480, 26514, 35155, և այլն:

11 Հուրմուզաբէ, Դոկումենտներ, 20, 1, էջ 93:

12 Քեզլեկունի, Մանուկ բնյ, էջ 28:

13 Բուխարեստ քաղաքի պատմութիւն թանգարանի արխիւ, № 35168:

14 Հուրմուզաբէ, Դոկումենտներ, 20, 1, էջ 162:



րով տիպար քաղաք մը հիմնելու Ռինիի մօտ, և սլաշտունը, որ ուստ արքունի-  
րին կողմեն վստահվեցավ իրեն հետևելու թուրք շարժումներուն Դանուբի  
շրջանին մեջ, ինչպես և Բուխարեստի և Յաշի իշխաններուն գործունեության՝  
ի վնաս ուսմեն ժողովուրդին, զրկագներ, որոնք արժանի են նյութ դառնալու  
ուրույն հողվածներու և որոնք, այլապես, կերևան մանրամասնորեն. Մա-  
նուկ բեյի կյանքին և գործին նվիրված մեր ընդարձակ մենագրության մեջ:

## № 14

### ՄԱՆՈՒԿ ԵՎ ԻՐ ՀԱՅԵՐԸ

Մանուկ բեյի կյանքին այս գլուխը փակելն առաջ շենք կրնար բանի մը  
սող շնվիրել իր հայ գործակիցներուն, այսինքն անոնց, որ աշակցեր էին  
իրեն՝ ուստ շահներուն մատուցած իր ծառայությանց ընթացքին, ըլլա սպաս-  
րադմական գործողություններու պահուն, ըլլա հաշտության համար իր կա-  
տարած աշխատանքներուն մեջ:

Արդարև, Մանուկ հավատարիմ մարդոց խումբ մը կհավաքեր միշտ իր  
շուրջը. Բացի բազմաթիվ այն գործակիցներէն, որոնք անհրաժեշտ էին իր  
առևտրական այնքան ընդարձակ գործունեությանց համար. Դանուբի զույգ  
ափերուն վրա, աշխատակիցներու ուրիշ խումբ մը իր տրամագրության տակ  
ունէր ան իր քաղաքական գործունեության մեջ:

Այս մարգին վրա անմիջական աշակիցներ էին չորս Սերաստյանները—  
Պողոս, Մեսրոպ և Գաբրիէլ երեք եղբայրները նախ, և չորրորդը Մարտին՝  
Մեսրոպի որդին. Լեզուներու տեղյակ և քաղաքական ինտրիգներու մեջ թըրծ-  
ված՝ չորս Սերաստյանները ծանոթ անուններ էին Դանուբի զույգ եզերքնե-  
րուն վրա, և զանազան առիթներով իրենց ծառայությունները ի սպաս էին  
դրած ուսմեն երկիրներու իշխաններուն: Անոնցմէ օգտված էր նաև Մանուկ  
եղած անսովորաբար ուսերու հետ իր շփումներու ընթացքին: Բայրաքիարի օրով  
Պողոս Սերաստյանն էր եղբր առավելապես, որ բանագնացի գեր կատարած  
էր: Մեսրոպն էր, որ առհասարակ կշարագրեր հայերեն լեզվով իր նամակ-  
ները, մինչ Մանուկի իր իսկ գրի առած գրությունները հայատառ թուրքերեն  
էին, թուրքերենը եղած ըլլալով իր մայրենի լեզուն: Գաբրիէլ գործնական աշ-  
խատանքներ էր, որ կկատարերու իսկ Մարտին ասպարեզ եկավ համեմատա-  
բար ավելի ուշ, 1808-էն հետո:

Բոլոր Սերաստյաններն ալ միշտ անձնվեր մնացին իրեն, և եղան ուսե-  
րու հետ իր գործակցության բոլոր հանգրվաններուն մեջ: Մանուկ բեյ, իր  
կարգին միշտ պաշտպան, մնաց անոնց, և երբ կմերժեր իրեն համար որևէ  
գրամական հատուցում ուսերուն իր մատուցած ծառայությանց փոխարեն՝  
ուստ իշխանությանց հոգածությանը կհանձնարարեր Սերաստյանները:

Սերաստյան երեք եղբայրներն ալ ուսական շահերու շրջանակին մեջ  
սյուսի մնային հաշտության գաշնագրի կնքումնէն ետքն ալ, շարունակելով  
վայելել ուսական պաշտպանությունը:

Այնպէս որ, երբ Ռուսիո կանցլեր Նեսելրոդ 1813 հուլիս 13/25-ին Պե-  
տերբուրգէն կգրեր Պոլիս՝ ուստ զնսպան Իտալիսկիի, թե ցարը Մանուկ բե-  
յին ուսական քաղաքացիություն շնորհած է և կհանձնարարեր հետևաբար

անոր՝ անհրաժեշտ պաշտպանությունը ընծայել Մանուկ բեյին Վալահիո և Մուղղոլայի մեջ իր ունեցած գործերը կարգի դնելու առթիվ, որպեսզի ան կարևոր օգտվիլ ժամկետն ու պտուրություններին, զորս Բուխարեստի դաշնագիրը կապահովեր երկու կայսրությանց դադթականներուն, կազմելոցն էր միևնույն ատեն, թե ռուս քաղաքացիություն շնորհված է նաև Պողոս, Մեսրոպ և Գաբրիել Սեբաստյաններուն, և թե անհրաժեշտ է անոնց ևս ընծայել միևնույն պաշտպանությունը<sup>15</sup>։

Բայց ոչ որ այնքան անձնվիրությամբ ծառայեց Մանուկ բեյին, որքան Պապիկ Արթինյան և Ասատուր Ավետյան, որոնք իր հավատարիմ գործակիցներն եղան ոչ միայն իր սեփական գործերուն մեջ, այլ ռուս շահերուն իր բերած օժանդակության ատեն ար։

Հետագային, իր Ռուսիա հաստատվելուն հետո, երբ կմիջամտեր ռուս արքունիքին մոտ որպեսզի տիտղոսներ շնորհվին նաև իր զույգ աջակիցներուն, իր դիմումին մեջ կակնարկեր նաև անոնց մատուցած ծառայություններուն այդ առթիվ։

Ասատուրի համար կրսեր, օրինակ, թե սուլթան Մուստաֆայի օրով օգնական նշանակված էր իր մոտ, և Բայրաթթար Մուստաֆա փաշայի հրամանին տակ կառավարիչն էր եղեր Շիշթովի շրջանին, իսկ իշխան Պրոգորովսկիի ատեն իր հետ միասին անցած էր ռուսերուն։ Զորավար Կամենցկիի օրով հաստատված էր Զիմնիշա, Շիշթովի դիմաց, և իրեն, Մանուկի, կղրկեր շահական յուրեր, զորս կոմս Կամենցկիի կփոխանցեր ինքն ալ իր կարգին, Նիկոլայի և Կուլեի բանակցությունները իր միջոցով եղած էին և երկիցս հանդիմություն ունեցած էր Կուլե անցնելու թուրքերուն մոտ։ Կուսուղովի օրով ալ Զիմնիշա մնացեր էր և ճշգրիտ լուրեր կղրկեր Զուլթովա ուղղակի կուսուղովի՝ իրեն։ Ան Զիմնիշա մնացեր էր մինչև հաշտության կնքումը։

Ավելցնեք, որ Ասատուր իր աներծագն էր և 1813-էն 1916 Բուխարեստ ղեկ երիք տարի մնաց Մանուկ բեյի գործերուն զուխը, հետո վերջնապես Բեսարաբիա անցնելու համար։

Գարով Պապիկին՝ Մանուկ բեյ անոր համար կգրեր, թե Բայրաթթար Մուստաֆա փաշայի օրով զինվորական պաշտոնի վրա էր ան հազարապետի աստիճանով, և Թրնավայի շրջանին մեջ Գաբրովան և Դերինդենը կկառավարեր, իսկ Պրոգորովսկիի ատեն ինքն ալ միասին էր անցեր ռուսերուն։ Մեծապես օգտակար եղած էր զոր. Բագրատիոնի իրրե քաջատեղյակ Քալկանյան շրջանի դիրքերուն և անոր հրահանգով ծառայած զոր. Զասի հրամանին տակ, ավելի հետո մաս աննելու համար կոմս Կամենցկիի վարած գործողություններուն<sup>16</sup>։

Սույն Պապիկն էր, որ Բայրաթթարի օրով Մանուկ բեյին ընկերացած էր Պոլիս, ուրկն ինք ևս խույս էր տվեր 1808 նոյեմբերի եղերական զեպքերին հետո, ուշագրավ դեր կատարելու համար Դանուբյան բերդաքաղաքներու գրավման ատեն մասնավորապես։

Մանուկ բեյի աջակցող հայերուն թիվը չի փակվիլ այս քանի մը զեմբով։ Ան ամենուրեք գործակիցներ կձարեր իրեն, բոլորին ալ վրա տարածելով իր հեղինակությունը, բայց և իր բացառիկ հոգածությունը։

15 ՄՌԱՔԱ, գործ 2290, թղթ. 28։

16 Բուխարեստ քաղաքի պատմության թանգարանի արխիվ, № 35207։



## Վ Ա Վ Ե Ր Ա Թ ՈՒ Ղ Թ Ե Ր

Վաճառքաւորները, զորս ունինք ի ձեռին, լրիվ կպարպեն Մանուկ բեյի կատարած վճռական դերը պատերազմի այս նոր շրջանին՝ փութացնելու համար ռուս և թուրք հաշտութիւնը, և այս կերպով աջակցելու համար Նապոլեոնի ձախողանքին:

Այդ վաճառքաւորները իրենց ստվար մասով պիտի կցվին այն մենագրութեան՝ զոր պիտի նվիրենք Մանուկ բեյի կյանքին ու գործունեության և զոր այս պահուս հայերենի վերածելու վրա ենք՝ ռումաներէն շարադրած ըլալով զայն նախապէս:

Ավելորդ չսեպեցինք սակայն անոնցմէ մէկ քանին կցել մեր հողավածին սուրհերկորդ մասին, ինչպես ըրինք առաջին մասը փակելու ատեն ալ: Փաստաբաւորները, զորս կենդակայացնենք, առնչություն ունին առավելապես այն աշխատանքներուն հետ, որոնց լծփեցալ Մանուկ բեյ ռուս և թուրք պատերազմի վերջին փուլերուն ընթացքին, այսինքն Բայրաքթարի եղերական վախճանեն և իր գործունեությունը վերջնականապէս ռուս շահերուն կապելէ հետո:

## Ե 1

### ՄԱՐՏԻՆ ՍԵՐԱՍՏՅԱՆԻ ՏԵՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՊՐՈՉՈՐՈՎՍԿԻԻ ՀԵՏ

1808 ղեկոնմբեր 2 (նոյեմբեր 20)

Բախարեստ

(Հատված տեսակցութենէ մը, զոր Բախարեստի մէջ ունեցալ 1808 նոյեմբեր 20-ին Ռուս-զուկի Ամմեղ Էֆենդիին կողմէ զրկված Մարտին Սերաստյան՝ որ նամակներ և նվերներ կրէրք մարաջախտ իշխան Պրոպրովսկիին):

Պ. Սերաստիանին (ուղղե՛ Սերաստյան) ըսալ մարաջախտին, թի Ահմեդ Էֆենդիի զինք զրկած է հատկապես նորին բարձրութեան ուղղված բարեկամական նամակով մը, նորոգելու և ամրացնելու համար բարեկամութեան և իրաւաւորակացողութեան կապերը, ընդմեջ իրեն, Մուստաֆա փաշայի հաջորդին և մարաջախտին, հաժախալով, որ ինք ևս իրավունք ունի անոնց և փափաքելով արժանանալ անոր վստահութեան և հարգանքին:

Մարաջախտը պատասխանեց, թի Ահմեդ Էֆենդիին իր համբաւին կճանչնա. և բանի որ ան կուզա հաջորդելու իր հանգուցալ բարեկամ՝ Մուստաֆա փաշային, իրեն համար հաճույք կսեպի իր բարեկամությունը հավաստել անոր իբրն իր հարեանը:

Մարտին խնդրեց մարաջախտին Ահմեդ Էֆենդիի անունով՝ ընդունիլ այն քանի մը ընծաները, զորս ան կզրկեր նորին բարձրութեան ի նշան բարեկամութեան, ըստ ներկայացված ցուցակին:

Մարաջախտը պատասխանեց, թե զանոնք կրնգունի իբրեւ հրաշխիք քա-  
րեկամութեան և նկատելով, որ շատ քիչ ատենական համար եկած է հոս և  
ուշիշէ չէ բերած հետը, իբեւ համար հաճուցը պիտի սեպե Յաշեն ուղարկել  
անոր իր փոխադարձ լարեկամութեան ապացուցութիւնը:

Մարաջախտը հարցուց հետո, թե Պոլսո հեղափոխութեանը վերջ գտա՞ծ  
է արդեւ:

Մարտին պատասխանեց, որ հաղիվ երեք օր տեւած է տն, և թե ըմբոստ  
ենիշերինեբը, տեսնելով սուլթան Մուստաֆայի դիակը՝ բաշված են, հեղաշա-  
ղելով սուլթան Մահմուդի հրամաններուն: Ու ըստի, թե Մուստաֆա փաշան  
ինքն էր, ու ինքզինքը օդը հանելը՝ ձեռքը շինալու: համար ապստամբներուն,  
որոնք իր կշանքին կապառեալն:

Մարաջախտը հավաստեց, որ խիստ զգացվում է իր հանգուցյալ բարե-  
կամին Մուստաֆա փաշայի աշա եղբական մահվան համար և որ իր կար-  
ծիքով լազ չէր, որ մեկ հարվածով ան փորձեր փութել օսմանցինեբու զինվո-  
րական բովանդակ հին սիւտեմը:

Մարաջախտը հարցուց, թե ի՞նչ էր շարժառիթը սույն աղետին:

Մարտին պատասխանեց, թե ենիշերինեբը զժգո՛հ մնալու պատճառներ  
ունենալով և միեւնույն տտեն զազտնի հասկացողութեան եկած ըլլալով հան-  
գուցյալ սուլթան Մուստաֆայի հետ, իր եղբայրը (Մահմուդ Բ.) ստիպված էր  
զայն ղոհել, վերջ տալու համար սույն ըմբոստութեան, որ կապառնար իր գա-  
հուն և ստիպելու համար ապստամբները, որպեսզի իրենց պարտականու-  
թեան զգոխը անցնին:

Մարաջախտը հարցուց, թե որո՞նք հաղթեցին ի վերջո, ենիշերինեբը թե  
սելժենները<sup>17</sup>: Մարտին պատասխանեց, թե սելժենները իրենց պարտութենեն  
հետո բաշվեցան ասիական կողմը, Սկյուտար:

Մարաջախտը հարցուց, թե ներկայիս մեծ վեզիրը ո՞վ է մայրաքաղաքին  
մեջ:

Մարտին պատասխանեց, թե սուլթան Մուստաֆա այդ բարձր պաշտոնին  
կոչած էր Առնաւուտ Մեմիշ էֆենդին, այն նույն անձը, որ սուլթան Սելիմի  
օրով իր զորքերով պաշտպանած էր Վալահիան Վիդինի Պազվանդօղլուին առ-  
պատակութեանց դեմ: Մարտին ավելցուց, թե Բեքիր աղան՝ որ Ահմեդ էֆեն-  
դիի բացակայութեան Ռուսչուկի հրամանատարութեանը վարած էր, սպանված  
չէ, ինչպէս պահ մը լուր տարածվեցավ հոս, ալլ ընդհակառակն, վերջեբս իր  
բարեկամական կապերը նորոգեց Ահմեդ էֆենդիի հետ, երգում տալով, որ  
պիտի ծառայէ հասարակաց գատին:

Մարաջախտը ըսավ, թե շատ բաներ այրած են մայրաքաղաքին մեջ և  
շատ մղկիթներ կրակի տրված, և հարցուց, թե Այա-Սոֆիան՝ ևս այրած է և  
շատ մարդ զոհա՞ծ է կոիվներու ընթացքին:

Մարտին պատասխանեց, թե թրքական բազմաթիվ տուններ հրո ճարակ  
եղած են, թե մղկիթները փրկված են, թե Այա-Սոֆիայի վրա բռնկած կրա-  
կը մարված է, թե երկուստեք մարդկային կորուստներուն թիւը մոտ 15 հա-  
զար կհաշվվի:



Մարաջախտը ըսավ, թե կապուտան-փաշան աղատած է նավու մը վրա ապաստանելով:

Մարտին հաստատեց, թե ան նալով գացած է Կաղիր փաշայի հետ մեկտեղ մինչև Վիզա, Մեղիայի մոտիկ, Սև ծովու ծովաբերնին ետին, մայրաքաղաքն ոչ շատ հեռու, և թե այնտեղ կգտնվին Բեքիր աղայի հրամանատարությամբ 15 հազար զինվորներ:

Մարաջախտը ըսավ, թե ուրեմն կրնա ան Ռուսչուկ անցնիլ, Ահմեդ էֆենդիի մոտ, և ի հարկին կարող է գալ ապավինել Վալահիա, ուր ինք, մարաջախտը, անոր ապաստան պիտի ընծայե, ապահովված իր թշնամիներուն կողմն որևէ վտանգի դեմ:

Մարաջախտը անոր հարցուց նաև, թե ո՞վ է Ռեիս էֆենդին ներկայիս:

Մարտին պատասխանեց, թե վերջերս սուլթան Մահմուդի կողմն այդ պաշտոնին կոչվեցավ Գալիր էֆենդին:

Մարաջախտը դիտել տվավ, թե աս այն Գալիր էֆենդին է, որ ասկե առաջ պաշտոնի վրա էր և բանակցեցեցաւ Մլորոզիայի զինադադարի դաշնագրին առթիւ:

Մարաջախտը տեղեկություն ուզեց Մանուկ բեյի և սպատար Բիրիքայի մասին:

Մարտին պատասխանեց, որ Ահմեդ էֆենդի լուծ ըլլալով Մանուկ բեյի ժամանման մասին վիզա՝ Ռուսչուկին հեռուն ձիավորներ զրկեց որպեսզի ընկերակցին անոր և որ ան հասած պետք է ըլլա արդեն. գալով Բիրիքայի, որ Ռուսչուկեն Պոլիս էր մեկնել Մանուկ բեյի ետեւն, այնտեղ մնաց իր ընտանիքին մոտ:

Նորին բարձրութիւնը անոր դիտել տվավ, որ <սուլթան Մահմուդ> վերջին շառավիղն է օսմանյանց տոհմին և այլևս հաջորդ չունի:

Մարտին պատասխանեց, թե անոր սուլթանուհիներեն ոչ մեկը հղի է մինչև այսօր:

Մարաջախտը հարցուց, թե պիտի ընդունվի՞ Իսմայիլի Փեհլիվան աղային մատուցած հրաժարականը:

Մարտին պատասխանեց, թե Ահմեդ էֆենդի մերժած է անոր հրաժարականը և հրավիրած է զայն, որպեսզի իր բարվոք և հավատարիմ ծառայութիւնները շարունակեն նաև իր իշխանութեան տակ:

Մարաջախտը ըսավ, թե Բրայլայի նազիրը, հանգուցյալ Մուստաֆա փաշայի թշնամի՞ն՝ զոհ եղած պիտի ըլլա անոր մահվան լուրը առնելուն:

Մարտին ըսավ, թե հիշյալը ինք ևս պիտի հաշտվի Ահմեդ էֆենդիին հետ, որ ավելի մեղմ է, քան իր հանգուցյալ նախորդը:

Մարաջախտը հրահանգներ տվավ, որպեսզի պ. Մարտին հոգածութեան արժանանա, մինչև որ Ահմեդ էֆենդիի ուղղված իր պատասխանը պատրաստ ըլլա և հանձնվի իրեն՝ անգամ մը ևս իր ներկայութեան ընդունվելով, որպեսզի հավաստվի անոր իր բարեկամութիւնն ու հարգանքը դեպի Ռուսչուկի իր այս լավ հարեանը:

1809 հունվար 10 (1808 թվականի 29)  
Բախարսես

Դրագոման Մանուկ խիստ զաղտնի կերպով հաղորդեց ինձ, թե Ռուսչուկեն իր մեկնումին ժամանակ, մտերմաբար խորհուրդ տված է նախկին կապուտան-փաշա Ռամիդ փաշային, որ վերջերս ապաստանած էր այնտեղ, որ եթե ուղե անցնել Վալահիա՝ ռուսերուն մոտ, պիտի գտնե ներկա պարագաներուն խիստ նպաստավոր ընդունելություն մը և քսվարար երաշխիք առ միշտ, մանավանդ, որ ծագումով իրիմցի է ինք, բայց ան պատասխանած է, թե իր նախատեսությունները և հույսերը հակահեղափոխության մը համար, պատճառներ են թուրքիա պահելու զինքը:

Մանուկ ինձի ըսավ, թե Ահմեդ էֆենդի թորախտավոր ըլլալով և ծանրաշնչություն ունենալով, որոնց ննթարկվեցավ ուժգնապես սույն դժբախտ հեղափոխության երեսն, կվախնա, որ անսպասելիորեն մեռնի ան, ինչ-որ անկարգությունները իրենց զաղաթնակետին պիտի հասցնե Ռուսչուկի մեջ. ահա թե ինչու ինք <Մանուկ> փութացուց իր մեկնումը Ռուսչուկեն և պիտի ջանա իր ընտանիքը ևս Բուխարեստ փոխադրել հոնկե որքան կարելի է շուտ:

Անոր հաղորդած են Ռուսչուկեն, թե Ահմեդ էֆենդի մուշտակ հագցուց (պաշտոն տվավ) զանազան սպաներու, թե այնտեղ կսպասվի շուտով Իսմայիլի Փեհլիվան ադան, թե լուր կա նաև, որ Դանուրի եզերքներուն մոտ կհասնին շուտով Բ. Դրան բանազնացները, բայց Վիգբի և Ադրիանուպոլսո շրջականերուն մեջ կտիրեն այս պահուս խռովություններ և ըմբոստություններ, որոնք մոտալուտ ներքին պատերազմ մը կզգացնեն և կսպառնան Բուլղարիո և Ռումելիի մեջ շփոթություններ պայթեցնելու. այլապես վախնալիք ոչինչ կա Վիգբիի և Ռուսչուկի կողմը. իսկ Ահմեդ էֆենդին պաշտոնական ոչինչ չըստացավ դեռ Բ. Դրենն:

ՄԱՍԷԱ, գործ 1928, թղ. 36, ֆրանսերեն պատճեն:

1809 հունվար 17/29  
Բախարսես

Դրագոման Մանուկ ինձ մեկ նամակը ցույց տվավ Ռուսչուկի իր գործակալին՝ Պապիկի, որ Ահմեդ էֆենդիի հավատարիմն է և ստանձնած է իր (Մանուկի) շահերը ևս իր բացակայության և որ խորհրդապահաբար իրեն կհաղորդե հետևյալը:

Իսմայիլի Փեհլիվան Աղան, ուզած ըլլալով մոտենալ Ռուսչուկի, որպեսզի Կուրբան-Քալարամի տունը տոնե Ահմեդ էֆենդիի իշխանության տակ



գտնվող գյուղի մը մեջ, իբր լիազոր Իսմայիլ իւզլամ էր իր տեղակալ Աբու Աղան իր հաղարի շափ հավատարիմ զինվորներով, իր հետ բերելով զնպի Բաբադաղ շուրջ 700 զինվորներ, և երբ կանգ առած էր Կուսկունջուկ գյուղը, Աբա Աղային լուր ստացած և, թև նախորդ մեծ էնզիր Չիլիրի փաշան<sup>18</sup>, զոր Մուստաֆա փաշա Պուսնի բշած էր զնպի Իսմայիլ, որպեսզի հոն իր ծախքով բանակ մը պահէ սուլն բերդաբաղարին պաշտպանութանը համար, զլուխն անցած տեղվույն բնակիչներուն և մնացյալ պահակազորքին, հայտարարած է, թև այլևս չեն ուզեր Փենչիվան աղան, ոչ ալ իր տեղակալը, որուն առջև պիտի փակվին դուռները և որ կրնա բաշվիլ երթալ իր մարդոց հետ:

Փենչիվան Աղա սուլն հեղակարծ զնպքը հաղորդած ըլլալով Ահմեդ էֆենդիին, այս վերջինը անոր ղրկած է իսկույն իր վստահելին՝ Հաճի Ամիլ Աղան բերանացի հայտնելու համար անոր, թև պետք է առայժմ որեւէ ձեռնարկ չընել Իսմայիլի և իր հափշտակչին դմ, թև պետք է ձեռք բաշել և իր ճակատագրին թողուլ վայրը իր բնակիչներով, զորս մոլորեցուցած է փաշան, որ, իրեն ներշնչելով, հակառակորդն է իրեն, և հաղորդելու անոնց, թև ոչ մեկ նպատակ ունի կոխել մղել իրենց դեմ և բռնի վերցնել բաղաբը, բայց պետք է ի վիճակի ըլլան զայն շղիջիլ ռուսերուն և անոնց կողմէ հարձակած պարագային զայն պաշտպանել ինչպէս պաշտպանեց Փենչիվան Աղան մինչև այսօր: Փենչիվան փաշայի բաշվելէն հետո՝ աչետեղ միայն 2000 զեշ զինվորներ կ'մնան, որոնց ծոցին մեջ վեճերն ու խռովութիւնները պիտի սկսին: Ահմեդ էֆենդիին կ'սորհի իր հավատարիմ ու սիրելին՝ Փենչիվան աղան գործածել իր բնախը և փորձված զինվորներուն հետ՝ ընդդէմ Ըլբըզլուի<sup>19</sup> դավադիրներուն և մնացյալ ապստամբներուն:

Մանուկ ինձ հավաստեց, թև Մեսրոպ Սերաստյան տեղեկութիւն շունկը ցարդ այս լուրեն, որ գաղտնի կ'պահէի Ռուսերու մեջ: Զեր վստմութիւնը պիտի դատե անոր կարեւորութիւնը, նկատի ունենալով, որ Մանուկ ինչ կ'հավաստե, թև Փենչիվանի բաշութիւնն ու համառութիւնն էր, որ թուրքերուն ձեռքը պահեցին ցարդ այս կարեւոր և ահաւոր բերդաբաղաբը:

Մանուկ մտերմական իր խոսակցութեանց ընթացքին ինձ ըսավ. թև եթէ Ահմեդ էֆենդիին չի պաշտպաներ Իսմայիլը Ռումելիի իր զինվորներով, զորս Բ. Դուռը ոչ թև Փենչիվան Աղային, այլ ուրիշին հրամանին տակ պիտի գնէ և որոնք ոչ մեկ արժեք պիտի ունենան այլևս, անոր համար է, որ աշպիտով պատերազմը պիտի վերսկսի, Իսմայիլի գրավումը անհունապիս ավելի պիտի գյուրանա և նույնիսկ անոր անձնաւթութիւնը անհնար պիտի ըլլալ: Ան ինձի ըսավ, թև Ահմեդ էֆենդիին ներկայիս հանգիստ է և ապահով ռուսերուն կողմէ, այնպիս որ անպաշտպան կ'թողու Զուրջովան և Իսմայիլը, և իր զորքերը կ'գործածեն ապստամբներուն դմ և իր սեփական երաշխագործութեան համար իր իշխանութեան տակ գտնված վայրերուն մեջ, որոնք կ'գտնվին ըմբոստներուն և իր հակառակորդներու սպառնալիքին կամ գրոհին ներքե, թև թշնամութեանց վերսկսման պարագային ինք հանձն կ'առնէ համոզել Ահմեդ էֆենդիին, որպեսզի համաձայնի Մարաշախտին (Պրոզորովսկի) հետ թև՝ մեկ և թև՝ մյուս բերդաբաղաբին համար, բայց պետք է առայժմ փաղաքշիլ զայն ու խնայիլ անոր (Ահմեդ էֆենդիին): Ան (Մանուկ ինչ) դիս երգվնցուց այս մա-

<sup>18</sup> Զեյնիի Մուստաֆա, մեծ վեզիր, 1807 մայիս 4—1808 հուլիս 29:

<sup>19</sup> Ըլբըզլու Սյուլեյման, որուն պաշտոն տված էր Բ. Դուռը Ահմեդ էֆենդիին «շաշիվ տեսնելու»:

սին չխօսիլ որևէ մեկուն հետ, նկատի ունենալով, որ իր ընտանիքը զեռ կցտնիլի թուրքերուն ձեռքը և կվախենա, որ անոնց կսղծն վտանգի և շնաջնջումի նշավակ կդառնա. (բւսով) թե կսպասե հաշտութեան՝ լիազորներուն վաւահա անցնելուն՝ որպիսիք իր ընտանիքը աղատե անոր սպառնացող վտանգներեն, մասնաւորաբար, ներկա դժնդակ պարագաներուն մեջ: Ան ինքի ըսավ, թե ուրիշ ոչ մեկուն պիտի չարտահայտվիր այս կերպով՝ որովհետեւ (համոզված է թէ) ևս երբեք չպիտի օգտագործեմ իր ըսածները, շարաշար չպիտի գործածեմ իր վստահութիւնը և չպիտի ուղեմ դայն զօհն որևէ անդադտնապահութեամբ. (ան ըսավ) թէ այս կերպով ան կսպասե տեսնելուն, որ ինչ դարձվածք պիտի ստանան բանակցութիւնները, որոնք պիտի սկսին՝ իր ծառայութիւնները ի սպաս զնելու համար մարաջախտին, շուղելով և չկրնալով որևէ բան խոստանալ կանխապէ, բայց հուսալով, որ պիտի կարենա մեծապէս օգտակար ըլլալ մէզի: Ան ինք զպացուց, թէ մեծ հակառակորդ մը ունիք հանձին Ալատրիո, որ մոլորեցուցած է և կշարունակե մոլորեցնել թուրքերը և կզրդե դատները ընդդէմանալ սույն իշխանութեանց մեզի կցվելուն: Այս առթիւ պետք է դիտել տամ, թէ ավստրիական զործակալ պ. դր Բրենների ճամբորդութիւնը զնպի Յաշ, պ. Դյուրլենբի օժանդակելու զմական տակ,— ի բացակայութիւն պ. Համմաքի, որ գծոված ըլլալով (Մոլդովայի) դիվանին և ուստերուն հետ՝ յի կրնար այս պահուս Զաշ վերադառնալ, առանց անպատեհութեան կրնա Մոլդովայի ավստրիական հյուպատոսարանի վիսիլի հարցերուն աշխատանքին մէջ ունենալ բոլորովին զիվանագիտակաւ նպատակ մը, ձգտելով աշխտեղ լրտեսել և հետազոտել ավելի մոտեւ լիազորներու զիմումները, մանավանդ ինչ որ կրնա վերաբերիլ իշխանապետութեանց և մասնաւորաբար վալախո հողվածին:

Մանուկ բեշ ինք ըսավ, թէ այն ատեն պիտի կարենա ինք բողաղերծել ամեն բան առանց վերապահութեան, որովհետեւ, ըսավ ինք, ի՞նչ օգուտ զհահարիւլելի առանց օգտակար ըլլալու գործին, եթէ իշխանապետութիւնները պիտի վերադարձվեն Բ. Դրան. այն ատեն թուրքերը պիտի նշմարեն, որ քողաղերծ ըրած է իրենց շահերը և գաղտնիքները Դանուբի հանդիպակաց եզերքին վրա և կորստանան պիտի մոտենիլ ու պիտի ստիպվի նույնիսկ հեռանալ այս երկրներէն և վաւահալեն՝ ապաստան փնդրելու ալլուր, զերծ մնալու համար թուրքերու և հույներու հաւածանքներեն, որոնք մեծապէս պիտի թշնամանան իրեն: Այս բանին համար պետք է, ըսավ ան, հետաձգեմ և հրաժարիմ բացարձակապէս նույնիսկ մտերմական բնույթի ամեն զիմումն իմ պետերուս մոտ. ստիպվեցա խոր գաղտնապահութիւն խոստանալ իրեն իր հայտնութեանց համար և իրեն ըսի թէ որևէ մեկին ավելի գիտեմ, թէ որքան կրնա աղքեղ Ահմեդ էֆենդիի և նույն իսկ Բ. Դրան նախարարներու կարծիքին վրա, մանավանդ երբ սուլթանը ևս իրեն հանդէպ կպահանջուի անպատեհական զգացում մը, զոր արտահայտեց նաև հանգուցալ Մուստաֆա փաշայի հայ սեղանաւորներուն. (ան ըսավ), թէ այսպիսով ըլլա իր սեփական, ըլլա մեր շահերուն պահպանման համար, պետք է խնամքով ծածկել երեսութիւնը և որքան կարելի է երկար ինքզինք նվիրված ցույց տալ թուրքերուն շահերուն, և ցույց տալ, որ մարաջախտին մոտ իր ունեցած վարկին շնորհիւ կմիջամտե ի նպաստ թրքական շահերուն Դանուբի սույն եզերքներուն վրա:

Պարտքս սեպեցի բոլոր այս մտերմական մանրամասնութիւնները հաղորդել մարաջախտին միմիայն առ ի գիտութիւն իրեն, խնդրելով իրմէն, որ



զիս պզտիկ շիոդու հանդեպ Մանուկ բնյի, ոչ ալ ուրիշին, տեղի շտալու համար որեւէ տարակուսանքի և կարենալ շարունակելու համար, առանց որեւէ կասկածի, իրմն քաղել այս կարգի տեղեկութիւններ, որմն մարաջախտը պիտի կարենա լավագոյն օգուտները քաղել ի նպաստ մեր օգոստոսափառ վեհապետին շահերուն: Մանուկ ինձ կրկնեց իր իսկ սեփական բառերով. «Առանց համարձակելու շատ առաջ երթալ և առանց ոչինչ խոստանալու կհոսամ, որ իմ տվլալներս և իմ միջոցներս մարաջախտին օգտակար պիտի ըլլան այնքան ազդեցիկ կերպով, որքան չպիտի կարենային ըլլալ 20 հազար ռուս ղինվորներն բաղկացած բանակ մը այս շրջաններուն մեջ»:

Կհամարձակիմ հանձնարարել այս առթիւ պ. Մեսրոպը և իր զավակը՝ Մարտին Սեբաստյանը, ղորս անհրաժեշտ է պահել Դանուբին անդին և զանոնք մշակել ի բացակայութիւն Մանուկ բնյի, որպեսզի շարունակեն իրենց ծառայութիւնները բաղձացված հաջողութեամբ:

ՄԻՒԱԲԱ, գործ 1928, թղ. 82—84: Ֆրանսերէն պատճեն:

## № 4

### ՄԱՆՈՒԿ ԲԵՅԻ ԵՎ ԶՈՐԱՎԱՐ ՄԵԼՈՐԱԴՈՒԹԻ

### ՏԵՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1809 մարտ 4

Բուխարեստ

(Հաղորդագրութիւն այն գաղտնի տեսակցութեան մասին, կոր Ն. Վ. տեղակալ-վորապար Միլորադովիչ և դրագոման Մանուկ բնյ ունեցան, կոլեգիայի խորհրդական Քիրիլլովի միջոցով, վորավարին ապարաւքին մեջ):

Մանուկ բնյ ղորավարին հայտնեց իր երախտագիտութիւնը այն բարութեան համար, ղոր իշխան մարաջախտը (Պրոդորովսկի) ունեցած էր հրահանգ տալով որպէսզի բնդունվի իր ընտանիքը:

Զորավարը Մանուկ բնյը ապահովեց մարաջախտին նպաստավոր տրամադրութեանց և իր վիճակին նկատմամբ անոր ունեցած ջերմ շահագրգռութեան մասին: Հետո ըստվ անոր, թի մարաջախտը իրեն վստահած ըլլալով իր՝ Մանուկ բնյի խոստումը, թի բանակցութեանց խզման պարագային պիտի դուրացնեն Ահմեդ էֆենդիի մօտ Իսմայիլ և Զուրջովա բերդաբաղաւքներուն անձնատվութիւնը, կուզն իր հետ միասին մշակել ծրագիրը գաղտնի այն պատրաստութիւններուն որոնք կիրարկութեան պիտի ղրվին այդ նպատակին հասնելու համար:

Մանուկ բնյ ըստվ, թի շանքեր թափելու վրա է համոզելու համար Ահմեդ էֆենդին, որ ինք ևս զա ապաստան փնտով Վալահիո մեջ և զայն բերելու համար ռուսներուն կողմը: Այն ատեն կուլեգիայի խորհրդական Քիրիլլով հաղորդեց ղորավար Միլորադովիչին պարունակութիւնը մարաջախտին ղրկած իր ղուցեց տեղեկագիրներուն այն թաքուն ձեռնարկներուն մասին, ղորս Մանուկ բնյ կատարած է Ահմեդ էֆենդիի և Ռամիզ փաշայի մօտ, տեղեկագիրներ, որոնք նորին վսեմութեան փետրվար 28 թվակիր հրահանգներէն ավելի առաջ հղված են:

Զորավարը հարցուց Մանուկ բեյի, թե որե՞նք պատասխանս չունե՞ր՝ իր վըստահելի մարդեն՝ Պապիկին և թե կկարծե՞, որ Ահմեդ էֆենդին մեզ կհանձնեն բերդաքաղաքը առանց կռվի՝ եթե թշնամությունները վերականգնվեն։

Մանուկ բեյ պատասխանեց, թե տրված ըլլալով իր ներկա կացությունը և նպատակովոր նկարագիրը Ռուսշուկի բնակիչներուն, որոնք կկասկածին արդեն Ահմեդ էֆենդիի վրա իբրև նվիրված ռուսերուն, հնարավոր չի գտներ այս անձնատվությունը՝ առանց ռուս բանակի մը երեման Դանուբին անդին և նույն իսկ այն կարծիքին է, թե անմիջապես որ ռուսները ուզեն անցնիլ Դանուբի շորս կետերեն, Պիետրոյանս, Ռուհովայի և Նիկոպոլիսի միջև, Սիլիստրայի մոտ, և Գալացին 15 հազար մարդով, Իսմայիլի, Զուրջովայի և Բրայլայի բերդաքաղաքները պիտի իյնան ինքնին, որովհետև Ռումելիի զանազան շրջաններու և Դանուբյան սույն եզերքներու բնակիչները, որոնք պիտի երթային զորացնել այդ բերդաքաղաքներու պահակազորքերը՝ չպիտի կարենան իրենց վայրերը թողուլ աշտեղ մեկնելու համար. ասկե դատ, Ահմեդ էֆենդիին կախված է պարեն և զորք չղրկել Իսմայիլ և Բրայլա, և եթե ռուս բանակ մը զա տասը օր պաշարել Ռուսշուկը, ան արդարացի պատրվակ պիտի ունենա հրավիրելու բնակիչները, որ կարենալ պահպանելու համար իրենց ընտանիքներն ու ստացվածքները, պետք է անձնատուր ըլլան ռուսերուն, և արգելելու զանոնք իրենց դուռները թողուլ զբաղվելու համար Զուրջովայով, և այսպեսով իրականացնել Ռուսշուկի անձնատվությունը և անմիջապես հետո էլ Զուրջովային. ասկե դատ այս միակ միջոցով է, որ ան պիտի հաջողի թույլ չտալ, որ վեց հազար հրացանները, զորս կնեղկայացնեն Ռուսշուկի բնակիչները, իրենց սեփական պաշտպանությամբ զբաղած, կարենան Զուրջովա անցնիլ։ Առանց ասոր, ըսավ ան, հակառակ Ահմեդ էֆենդիի բովանդակ բարի կամեցողության, որե՞նք միջոց չկա արգիլելու, որպեսզի զինվորներն ու ռազմամթերքը Զուրջովա չանցնին ի պաշտպանություն Ռուսշուկի։

Զորավարը դիտել տվավ, թե ուրեմն Իսմայիլի և Զուրջովայի ռուսերուն հանձնվելու մասին իր տված խոստումին համաձայն չէ, որ կարելի է հույս դնել Ահմեդ էֆենդիի վրա։

Մանուկ բեյ ըսավ, թե իր տվյալներուն վրա հիմնվելով կենթադրեմ, որ ապահով ըլլալու համար Զուրջովայի, Իսմայիլի, Բրայլայի և նույնիսկ Վիդինի անձնատվության՝ պետք է ռուս բանակ մը անվերսպ և առանց ժամանակ կորցնելու անցնի Դանուբին անդին և իսկույն քալի զնպի Բալկաններու ոտքերը՝ ստիպելու համար այս շրջաններու թուրքերը, ամենուրեք անոնց պարտադրելու համար օրերը և գողացնելու համար նույնիսկ Պոլսիները։ Փերկարար այս միակ միջոցով է, որ կարելի պիտի ըլլա զբավել օժանդակ զինվոր և ռազմամթերք ստանալու հնարավորություններն զրկված այս բերդաքաղաքները, առանց արյուն թափելու։ Առանց ատոր, թուրքերը, որոնք պատակաւ տած են այս պահուս ներքին տարակարծություններով, պիտի միանան բոլորերը, տարված ֆանատիզմ, միահամուռ կանգնելու համար ընդդեմ իրենց կրոնքի թշնամիին։ Այլպես ինք խոստում չտվավ այնպես կարգադրել, որ Ահմեդ էֆենդին Զուրջովան կարենա հանձնել, առանց որ Ռուսշուկի հողամասը Դանուբի մյուս կողմեն ռուս բանակե մի պաշարված ըլլա։

Զորավարը պատասխանեց, թե այս հատակագիծը ծանոթ էր և լավ, բայց պետք էր տեսնել, թե միջոց չկա՞ նախապես զբավել բերդաքաղաքները։ Այս բանին համար Մանուկ բեյ պետք էր ըմբռնել տար Ահմեդ էֆենդիին, թե սույն



պատերազմը պիտի մղվի մինչև ծայրագույն կետ՝ ոչ թե հանգուցյալ զորավար Միքելսոնի օրով եղածին նման, թե մարաքսիստը բոլոր միջոցները ձեռք առած է իր բանակին հայթայթելու համար այն սամենը, ինչ որ անհրաժեշտ է, թե Բրյադի մեջ ան ունի պաշարման հանդ հրետանի մը և նկատի ունենալով, որ մարաքսիստը դործունյա և նախաձեռնող է, Ահմեդ էֆենդի դատարարութեամբ է պարտութեամբ մատնելու Զուրջովայի գրավումն իսկ առաջ, տրված ըլլալով, որ ինք ևս շրջապատված է սամեն կողմն թշնամիներով և հակառակորդներով և թե, հետևաբար, իր սեփական փրկութեամբ պետք է փնտրի այստեղ և նախապէս հասկացողութեան գա ոտսերուն հետ և հանձնէ իր բերդաբաղաբը:

Մանուկ բն ըսալ, թե Ահմեդ էֆենդի, իրեն թուրք, պիտի չկարենա այդ բանը ընել՝ եթէ նույն իսկ ուզէ, քանի որ Ռուսընդը Զուրջովային զատող խիստ փոքր հետաժողովները կոչուրացնէ ձնշումը (պրեսամ) քնակիչներուն օգնութեան երթալու բերդաբաղաբին՝ առաջին իսկ սպասնալիքներուն, և ռուսներուն մոտեցած պահուն: Անոնք անվրիպելիորեն պիտի սպաննեն Ահմեդ էֆենդիին: Եվ արդեն գերազանց և հանդիպակաց եղբորին խիստ մոտ գտնվող ուժի մը սպանալիքի տակ առանց ըլլալու ալ, թուրքերը իրենք որեւէ բերդաբաղաբ պիտի չհանձնեն հոժար կամքով: Մանուկ բն ըսալ նաեւ, որ հորմահետ ֆէհլիան Աղա հեռացալ Իսմայիլին, այս բերդաբաղաբը չի գտնվիր այլեւ Ահմեդ էֆենդիին իշխանութեան տակ:

Զորավար հարցուց, թե Մանուկ բն կրնա՞ շուտով պատասխան ստանալ իր վստահելի մարդեն՝ Պապիկին:

Մանուկ պատասխանեց, թե գրավոր պատասխան մը չի կրնար ունենալ, բայց շուտով սուրհանդակ մը պիտի գրէ անոր Ռուսընդ՝ այստեղ կանչելու համար զայն, որպէսզի տեղեկութեաններ հաղորդէ և նոր հրահանգներ ստանա:

Զորավարը սույն խնդրուն մասին Մանուկ բնի հետ զաղտնի երկրորդ տեսակցութեան մը հետաձգեց անոր (Պապիկի) վերադարձին:

Նորին վստածութեան ըսալ նոր, Մանուկ բնին, թե կրնա վստահեցնել Ահմեդ էֆենդիին, թե մարաքսիստը տոգորված է բարյացակամութեամբ և վհահանձնութեամբ և որ Մանուկ բն ինքն ալ կրնա հույս գնել ամենաշուիչ վարձատրութեան մը՝ իր իր մատուցած ծառայութեանց համար, և պատված պիտի զգա ինքզինք իր ազդեցութեանը ի գործ գնելու այդ նպատակով, եռանդով և ճշտութեամբ:

Մանուկ բն ապահովացուց զորավարը, թե նվիրված է Ռուսիո շահերուն դեռ թուրքիա գտնված ատեն և հիմա, որ ռուս կայսերական բանակին անմիջական պաշտպանութեան տակ է՝ քնականարար իր դործունեութեանը պիտի կրկնապատկէ բոլոր այն բաներուն մեջ, որոնք կախում ունին իրմէ: Կըսէ միեւնուն ատեն, թե իրեն համար ավելի դուրին է Ահմեդ էֆենդիին Ռուսընդին անցընել Վալահիու, քան թե իրականացնել Զուրջովայի անձնատվութեանը: Դիտել տալով, թե ներկայիս ճիշտ պահէ է, երբ թուրքերը, պատակաւ, չպիտի կարենան ռուսներուն զորավար և կենդրոնացալ դիմադրութեան մը ցուց տալ: Առանց աղոր, ըսալ, եթէ ուզվի բերդաբաղաբները պաշարել անտաւոր կերպով, անոնց ամեն կողմն հաջողական օգնութեաններ պիտի հասնին, և անոնց գրավումը շատ սուղ պիտի արժն մեղի:

Ձորավարը հրավիրեց Մանուկ բեյը Պապիկի վերադարձը ախաղացնել իմանալու համար անկեկ Ահմեդ էֆենդիի տրամադրությունները և տեղեկագրելու համար մարաջաստին:

Նորին վստիսությունը բռավ Մանուկ բեյին, որ երբ Ահմեդ էֆենդի ռուսերուն հանձնախմբի ատանձին և առանց բերդարադարին, բան մը պիտի չշահինք աղկե, տրված ըլլալով, որ անոր անձնական բոլոր լավ հատկությունները բավական չէին զայն ահագոյն զինվորական մը դարձնելու Այդ պարագային ավելի լավ էր, որ մնար այնտեղ և իր տեղը բերվեր ուրիշ մը, որ պատերազմիկի ավելի տաղանդ ունենար, քան ինչ որ ինք ունեցած էր մինչև այսօր:

Մանուկ բեյ պատասխանեց, թե Ահմեդ էֆենդի այս պահուս ավելի զորեղ է, քան իր բոլոր հակառակորդները, որ ան կրնա ետ մղել որեւէ հաջորդ՝ զոր Բ. Դուռը պիտի ուղեր նշանակել իր տեղը, և որ հակառակ այս բոլորին ինք բոլորովին հուսահատված չէ զայն համոզելու հաջորդական թնադրություններով, և կամ զոնե, որքան հնար է, զայն տրամադրված պահել ի նպաստ ռուսերուն և այս նպատակին համար իր կողմն որեւէ միջոց չպիտի խնայե, ինչպես որ ըրավ անոր Բուքրեշէն բաշված ատենը, բայց միեւնոյն ատեն, ըսավ Մանուկ բեյ, պետք է նկատի ունենալ Ռուսոյն ու Ղուրբուլան շին նմանիւր Բուքրեշի:

ՄՌԱԲԱ, գործ 1928, թղ. 539—542, Զրահներն պատճեն:

## № 5

### ԹՈՒՐԷ ՊԱՏՎԻՐԱԿ ԳԱԼԻԲ ԲԵՅ ՄԱՆՈՒԿ ԲԵՅԻՆ

1809 ժարո 12 (1924 Մոհարրեմ 25)

Յաշ

...Մեր Յաշ ժամանումը որոշված ըլլալով, առիթ մը կփնտռի բարեկամության և սիրո զգացումներս արտահայտելու Ձեզի և ի՞նչ ավելի լավ առիթ կրնար ըլլալ, քան զրամական առիթը:

